և 47 տարի կարեւոր պաշտօններ կը վարէ, շինութեանց տեսչութիւններ և նուիրակութիւններ կ'ընէ և խոր ծերութեան մէջ կը վախճանի Երուսաղէմ (Ցիշ. ՄՁ. թ. 2626 ԺՊԵ. Ա. 233, Սիօն 1867, Յուլիս, թ. 7)։ Ամիրխանի խնդրանքով գրչագրուած է մագաղաթ Հարանց Վարք մը ի մի տուփ ամփոփուած Սաղմոսարան, Աղօթաւոյց, Տօնացոյց և Պարզատումար և այլ գրքերով (ՄՁ. թ. 410) ուր կը գտնուի անոր վարուց մասին յիշատակարան մը։ Ըստ նոյն յիշատակարանին, Ամիրազիզ Ս. Յակոբին կը նուիրէ նաև երկու մագաղաթ աւետարան ոսկէզօծ և ադամանդակուռ կազմով։ Ամիրազիզ Ս. Յակոբի մէջ նկարել կուտայ նաև 12 պատկերներ. Ս. Յակոբայ, Ս. Առաքելոց և Ս. Հրեշտակապետաց դռները, մաքրել կուտայ ՋԸՐՀՈՐ մը. ինքն գրած է «Ի ՌԽ (=1591) մաի ի Ս. յեմ. և ի ՌՃ (1651) թվն. զայս ամենայն աւարտեցի կամօքն Ս...»։ (ՄՁ. թ. 2626, Խապ. Ցուց. Տեար Զ. էջ 395-96)։

ԱՅՎԱԶ (ՊԱՐՈՆ) ԿԱՐԲԵՑԻ.— Ասոր մեծ հայրն էր վաճառական Յակոբճան որ կը մեռնի Պուրսա՝ հայրը Տէվլէթ բէկ, որ և կը հոգար վանքեր եւ անապատներ. մեռաքսի համար Գանձակ երթալով՝ կը մեռնի հոն և մարմինը կը բերուի Կարբի և կը թաղուի (1676) Ս. Կիրակոս եկեղեցիի կից շինել տուած գերեզմանին մէջ։ Պարոն Այվազ հօրմէն աւելի ճոխացուց հարստութիւնը և հետեւող էր բարի գործերու. փորել տուաւ Կարբոյ դաշտ կոչուած ծովը։ Սիրելի էր Նահապետ կթղին. Կարբիի մէջ կառուցանել տուաւ եկեղեցի մը հոգալով անոր բոլոր անօթները։ Որոտան գիւղէն ջուր բերել տալով՝ շինեց աղբիւր մը։ «Եւ յետ այսր ամենայնի...առեալ գանձս բազումս ի բաժին Ս. Երուսաղէմի և գնաց ի թուին ՌՃԽԸ (=1699) (Տե՛ս ԲԲ. Կարբի բառը)։ Ամդեցի Մինաս Պե. կը յիշէ Պարոն Այվազը իր օրագրութեանց մէջ, անոր ուխտաւորութեան առթիւ։

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱՊԿԻՐՑԻ, Մբ.—Կը յիշուի, 1702ին, Ամդեցի Մինաս Պե.ի օրագրութեանց մէջ։

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԷՐԷՆՏԷՑԻ, Մբ. Զռ. 1892. ՏՓ. 1894-95. Ա.ռ. Եդեսիոյ 1896 1907. ապա Բաղէշի՝ 1913, նահատակուած 1915 ի Բաղէշ։